

Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ33 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

/նիստը կայացել է 2021թ. հունիսի 18-ին/

Նիստին մասնակցում են մանկիտրիի 38 անդամները :

Օրակարգում՝

1.Օրակարգի հարցերի հաստատում:

/զեկ.՝ Ն. Մխիթարյան/

2.Նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների մասին:

/զեկ.՝ Ն. Մխիթարյան/

3.2020-2021 ուստարվա II կիսամյակի և տարեկան հաշվետվությունների մասին:

/զեկ.՝ Ն. Մխիթարյան/

4.2020-2021 ուստարում դպրոցում անվճար գործող խմբակի կատարած աշխատանքների ամփոփման մասին:

/զեկ.՝ Զ.Վարդանյան/

5.2020-2021 ուստարում 4-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգման մասնակցելու թույլտվության հարցը:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան /

6.2020-2021 ուստարում 9-րդ դասարանի աշակերտների ավարտական քննություններին մասնակցելու թույլտվության հարցը:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան/

7. 120-ից 200 ժամ բացակայություն ունեցող աշակերտի փոխադրման հարցը:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան/

8. 2020-2021 ուստարվա 1-ից 3-րդ և 5-ից 8-րդ դասարանների աշակերտներին դասարանից դասարան փոխադրելու հարցը:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան /

9. 2020-2021 ուստարվա 2-ից 8-րդ դասարանների տարեկան գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտներին գովասանագրերով պարգևատրելու, ինչպես նաև «Գերազանցության» հավաստագրի և «Գերազանցության» վկայականի հավակնորդների հարցը:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան/

10.Քննությունների կազմակերպման աշխատակարգի և քննական հանձնաժողովների կազմի ներկայացում:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան/

Ելնելով մանկիտրիի մի խումբ անդամների կարծիքներից, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նախապես հայտարարված օրակարգը:

Հիմք ընդունելով Ն. Մխիթարյանի հաղորդումը մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել հաշվետվությունները:

Հիմք ընդունելով մանկավարժական խորհրդի անդամների կարծիքները՝ հաստատության մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հավանություն տալ հաշվետվությանը:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021թ մայիսի 18-ի N785 -Ա/2 հրամանի 28-րդ կետը, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

5.1 2020-2021 ուստարվա տարրական դպրոցի 4-րդ դասարանի թվով 34 /երեսունչորս/ աշակերտներից ներքոհիշյալ 32 /երեսուներկու/ աշակերտներին թույլատրել մասնակցելու գիտելիքների ստուգմանը:

5.2 2020-2021 ուստարվա տարրական դպրոցի 4-րդ դասարանի թվով 2 աշակերտներին ազատել գիտելիքների ստուգումներից:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021թ մայիսի 18-ի N785 -Ա/2 հրամանի 28-րդ կետը, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

6.1 2020-2021 ուստարվա 9-րդ դասարաններում սովորող թվով 31 /երեսունմեկ/ աշակերտներից ուսումնական առարկաներից տարեկան դրական գնահատականներ ստացած ներքոհիշյալ 30 /երեսուն/ աշակերտներին թույլ տալ մասնակցելու ավարտական քննություններին:

6.2 2020-2021 ուստարվա տարրական դպրոցի 9-րդ դասարանի թվով 1 աշակերտին ազատել ավարտական քննություններից:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

120-ից 200 ժամ բացակայություն ունեցող, 5-րդ դասարանի աշակերտին փոխադրել հաջորդ դասարան՝ հիմք ընդունելով քննություններից և ամփոփիչ ստուգողական գրավոր աշխատանքներից դրական գնահատական ստանալու փաստը:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տարեկան դրական գնահատականների հիման վրա փոխադրական դասարանների թվով 249 /երկու հարյուր քառասունինը/ աշակերտներին փոխադրել հաջորդ դասարան:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021թ մայիսի 18-ի N785 -Ա/2 հրամանի դրույթները, հաստատված «Կարգը» և հաշվի առնելով ուսուցիչների կարծիքները, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

2-8-րդ դասարանների տարեկան 9-10 միավոր գնահատված թվով 48 /քառասունութ/ ներքոհիշյալ սովորողների պարգևատրել ՀՀ ԿԳՄՍ գովասանագրով:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021թ մայիսի 18-ի N785 -Ա/2 հրամանի դրույթները, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

10.1 Հաստատել քննությունների կազմակերպման աշխատակարգը և հանձնաժողովների կազմը:

10.2 Ձայնագրել բանավոր քննությունների պատասխանները:

Նախագահ՝

Ն.Մխիթարյան

Քարտուղար՝

Վ.Թադևոսյան